ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/85/2026

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան **29 մայիսի 2026թ.**

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Արմեն Մարուխյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2026 թվականի մայիսի 29-ին քննելով Պետական եկամուտների կոմիտեի Իրավաբանական վարչության հատուկ գործերի բաժնի գլխավոր մասնագետ Բեատրիչե Սանթուրի Ավանեսյանի ընտանիքի անդամ Օնիկ Միխայելի Եղիազարյանի կողմից Պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագիրը (այսուհետ՝ նաև Հայտարարագիր) «Հանրային ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ նաև Օրենք) սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/85/2026 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով վերապահված գործառույթների շրջանակում, Օրենքով սահմանված հայտարարագրերը, մասնավորապես՝ հայտարարատու պաշտոնատար անձանց ընտանիքի անդամների՝ 2023 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագրերը Օրենքով սահմանված ժամկետում ներկայացված լինելու փաստի ստուգման արդյունքում պարզել է, որ Պետական եկամուտների կոմիտեի Իրավաբանական վարչության հատուկ գործերի բաժնի գլխավոր մասնագետ Բեատրիչե Սանթուրի Ավանեսյանի ընտանիքի անդամ Օնիկ Եղիազարյանի Հայտարարագիրը ներկայացված չէ Հանձնաժողով:

1.2 Հանձնաժողովի կողմից 2026 թվականի փետրվարի 25-ին թիվ 01/512-2026/60-2026 գրությամբ Օնիկ Եղիազարյանի՝ հայտարարագրման էլեկտրոնային համակարգում գրանցված պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին ծանուցում է ուղարկվել Հայտարարագիրը ներկայացնելու պարտականության վերաբերյալ, միաժամանակ առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, լրացնել և ներկայացնել համապատասխան հայտարարագիրը: Օնիկ Եղիազարյանը ծանուցվել է նաև, որ Հայտարարագիրը 30 օրվա ընթացքում չներկայացնելու դեպքում անհրաժեշտ է ծանուցումը ստանալուց հետո 31-րդ օրը՝ ժամը 14:25-ին ներկայանալ Հանձնաժողով՝ մասնակցելու վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմելուն: «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անհատական ծանուցման ընթացակարգով 2026 թվականի փետրվարի 25-ին և մարտի 9-ին ծանուցումը միաժամանակ ուղարկվել է Օնիկ Եղիազարյանի՝ հայտարարագրման էլեկտրոնային համակարգում գրանցված անձնական էլեկտրոնային փոստի հասցեին: Հիմք ընդունելով «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի 10-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումները՝ 2026 թվականի մարտի 18-ին, բնակչության պետական ռեգիստրում հաշվառված հասցեով փոստային առաքմամբ՝ պատվիրված նամակով ուղարկվել է թղթային ծանուցում:

2026 թվականի մարտի 19-ին նշված ծանուցումը ևս մեկ անգամ ուղարկվել է Օնիկ Եղիազարյանի էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ տեղադրվել է հրապարակային

ծանուցումների պաշտոնական (www.azdarar.am) կայքում: 2026 թվականի մարտի 29-ին Օնիկ Եղիազարյանն օրենքի ուժով համարվել է պատշաճ ծանուցված:

1.3 Պատշաճ ծանուցված Օնիկ Եղիազարյանի բացակայությամբ 2026 թվականի ապրիլի 29-ին կազմվել է թիվ ՎԻՎ 98/26 արձանագրությունը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.4 Հանձնաժողովի կողմից 2026 թվականի մայիսի 8-ի՝ 01/1342/1-2026 գրությամբ Օնիկ Եղիազարյանին ծանուցում է ուղարկվել, որով առաջարկվել է 2026 թվականի մայիսի 29-ին՝ ժամը 17:05-ին ներկայանալ Հանձնաժողով՝ թիվ ՎԻՎ 98/26 արձանագրության հիման վրա իրականացվող վարչական իրավախախատման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու նպատակով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծանուցումը ուղարկելու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, Հանձնաժողովը չի ստացել հետադարձ ծանուցումը (ծանուցման մասին անդորրագիրը), Հանձնաժողովը, առաջնորդվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29.1-ին հոդվածի կարգավորումներով՝ 2026 թվականի մայիսի 22-ին ծանուցումը թիվ 01/1510-2026 գրությամբ ուղարկել է Երևանի Արաբկիր վարչական շրջանի համայնքի ղեկավարին և միաժամանակ տեղադրել Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (www.azdarar.am), որից հետո հինգերորդ օրը՝ 2026 թվականի մայիսի 27-ին, նշված ծանուցումը համարվել է հանձնված (ստացված):

1.5 Բացի այդ՝ մայիսի 11-ից մինչև մայիսի 19-ն ընկած ժամանակահատվածում Օնիկ Եղիազարյանի՝ հայտարարագրման էլեկտրոնային համակարգում գրանցված անձնական բջջային [redacted] հեռախոսահամարին զանգահարելու միջոցով բազմիցս փորձել է արվել կապ հաստատել Օնիկ Եղիազարյանի հետ, և վերջինս նշված հեռախոսազանգերից միայն 2026 թվականի մայիսի 19-ին՝ ժամը 12:48-ին կատարված հեռախոսազանգին է պատասխանել, որի ընթացքում տեղեկացվել է գործի քննության տեղի և ժամանակի մասին:

1.6 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Օնիկ Եղիազարյանի բացակայությամբ 2026 թվականի մայիսի 29-

ին տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/85/2026 գործի քննությունը:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշումները ու պարզաբանումները

Վարույթի ընթացքում Օնիկ Եղիազարյանի կողմից գրավոր պարզաբանումներ չեն ներկայացվել: Միաժամանակ 2026 թվականի մայիսի 19-ին կատարված հեռախոսազանգի ընթացքում վերջինս նշել է, որ ներկա պահին Հայտարարագիր ներկայացնելու պարտականության մասին մտածելու ցանկություն չունի:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/85/2026 գործում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում, որ.

3.1 Բեատրիչե Սանթուրի Ավանեսյանը Պաշտոնատար անձի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագրի «Ա.2. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների մասին տվյալները» ենթաբաժնում Օնիկ Միխայելի Եղիազարյանին ներկայացրել է որպես ամուսին: Միաժամանակ Արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության էլեկտրոնային շտեմարանում առկա տվյալների համաձայն՝ Օնիկ Միխայելի Եղիազարյանի և Բեատրիչե Սանթուրի Ավանեսյանի միջև ամուսնության պետական գրանցումը կատարվել է 2019 թվականի հուլիսի 13-ի՝ ամուսնության պետական գրանցման մասին [redacted] ակտով:

3.2 Պետական եկամուտների կոմիտեի Իրավաբանական վարչության հատուկ գործերի բաժնի գլխավոր մասնագետ Բեատրիչե Սանթուրի Ավանեսյանի ընտանիքի անդամ Օնիկ Եղիազարյանը Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հանդիսացել է Հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ:

3.3 Օնիկ Եղիազարյանի կողմից Օրենքով նախատեսված Հայտարարագիրը Օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չի ներկայացվել Հանձնաժողով:

3.4 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության օրվա դրությամբ Հայտարարագիրը չի ներկայացվել Հանձնաժողով:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական հայեցողական պաշտոն զբաղեցնող անձինք (բացառությամբ սույն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված խորհրդականների), քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 1-ին և 2-րդ ենթախմբերի պաշտոն զբաղեցնող անձինք, արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարը, զինվորական ծառայության բարձրագույն հրամանատարական և բարձրագույն սպայական պաշտոններ զբաղեցնող անձինք, ***հարկային, մաքսային ծառայությունների բարձրագույն և գլխավոր պաշտոններ զբաղեցնող անձինք,*** ոստիկանության, քրեակատարողական, պրոբացիայի և հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների գլխավոր պաշտոն զբաղեցնող անձինք, Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության և դատական կարգադրիչների ծառայության բարձրագույն պաշտոններ զբաղեցնող անձինք սույն օրենքով նախատեսված կարգով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագիր:

4.2 Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամները հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու հայտարարագրում ներկայացնում են իրենց գույքի և եկամուտների, իսկ դադարեցնելու, ինչպես նաև **տարեկան հայտարարագրերում՝ գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալներ:**

4.3 Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի չափահաս անդամները համարվում են հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ և հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում լրացնում են իրենց գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալները, պատասխանատու են դրանց իսկության համար:

4.4 Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամներն (ընտանիքի կազմի մեջ մտնող անձինք) են նրա ամուսինը, անչափահաս

զավակը (այդ թվում՝ որդեգրված), հայտարարատու պաշտոնատար անձի խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը, հայտարարատու պաշտոնատար անձի հետ համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձ:

4.5 Նույն հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անդամի, ինչպես նաև սույն հոդվածի 5.1-ին կետով սահմանված դեպքերում հայտարարագրերը սույն օրենքի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից սահմանված պահանջների, կարգի և ժամկետների պահպանմամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով չներկայացնելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

4.6 Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձինք պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրերին հաջորդող 30 օրվա ընթացքում ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով: Նշված անձինք պաշտոնավարման ընթացքում տարեկան հայտարարագրերը ներկայացնում են մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա մայիսի 31-ը:

4.7 Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված հայտարարագրերը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

4.8 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.9 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ

վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.10 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.11 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.12 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.13 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.14 Օրենսգրքի 267-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննվում է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությամբ: Գործը կարող է այդ անձի բացակայությամբ քննվել միայն այն դեպքերում, երբ տվյալներ կան գործի քննության տեղի և ժամանակի մասին նրան ժամանակին ծանուցելու վերաբերյալ և եթե նրանից միջնորդություն չի ստացվել գործի քննությունը հետաձգելու մասին:

4.15 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին: Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է նաև բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքի 34-րդ հոդվածի կարգավորումների համաձայն՝ Օնիկ Եղիազարյանը, որպես Պետական եկամուտների կոմիտեի Իրավաբանական վարչության հատուկ գործերի բաժնի գլխավոր մասնագետ Բեատրիչե Ավանեսյանի ընտանիքի անդամ՝ ամուսին, հանդիսանում է Պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ, սակայն Հայտարարագիրը Օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա Հանձնաժողով չի ներկայացրել, այն է՝ թույլ է տվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանք:

Հանձնաժողովը գտնում է, որ խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել՝ արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը: Տվյալ դեպքում պարզվել է, որ Բեատրիչե Սանթուրի Ավանեսյանի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագրի «Ա.2.» ենթաբաժնի գրառման համաձայն Օնիկ Եղիազարյանը հանդիսանում է վերջինիս ամուսինը, իսկ Արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության էլեկտրոնային շտեմարանում առկա տվյալների համաձայն՝ Օնիկ Միխայելի Եղիազարյանի և Բեատրիչե Սանթուրի Ավանեսյանի միջև 2019 թվականի հուլիսի 13-ին կատարվել է ամուսնության մասին [redacted] ակտային գրանցումը, հետևաբար՝ Օնիկ Եղիազարյանը Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հանդիսանում է Հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյո՞ք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ: Սույն

դեպքում Օրենսդրի կողմից սահմանված պահանջների կատարումը նպատակ ունի ապահովել հայտարարատու անձի հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամների գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը, որը տվյալ դեպքում խաթարվել է՝ Օնիկ Եղիազարյանի կողմից Հայտարարագիր չներկայացնելու արդյունքում: Մասնավորապես Օնիկ Եղիազարյանի կողմից Հայտարարագիր չներկայացնելու արդյունքում պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամի ընդհանուր գույքային դրությունը Հանձնաժողովին և հանրությանը հասանելի չի դարձել, ինչը վտանգում է Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով պաշտպանվող հասարակական շահը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ Օնիկ Եղիազարյանը ենթակա է վարչական պատասխանատվության Օրենսգիրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի համար:

Ընդ որում՝ Օնիկ Եղիազարյանը մինչև գործի քննության օրը չի ներկայացրել Հայտարարագիրը, ինչի արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի դրույթներով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը շարունակում է մնալ խաթարված:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով առկա չէ Օրենսգրքի 34-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող, ինչպես նաև 33-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող որևէ հանգամանք:

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ, 8-րդ և 11-րդ մասերով, Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով, 282-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 283-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված Պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց

հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու համար Օնիկ Միխայելի Եղիազարյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ (տուգանք) սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ ***200,000 ՀՀ դրամի չափով:***

2. Տուգանքը պետք է վճարվի գանձապետական ***900005001335*** «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» ***հաշվեհամարին***՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Օնիկ Միխայելի Եղիազարյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**